

բանուորին և ազատերու նորա և նորա որդոց կեանքը, այլ հոկ-  
տեմբեր ամսին կային նոյն իսկ ոռու բանուորներ, որոնք կա-  
զակների և թուրքերի հետ միասին վառեցին Զամբարաքեանդի  
հայերի տները, օր. Միրզարէգեանի, Թառայեանի, Արուտչեսնի  
և այլն. Այս այսպէս է, որովհետեւ պատմական-հասարակական  
կեանքում աղջութիւնը տուաւել դօրեղ ֆակտոր է քան դասա-  
կարգային շահերը:

“Որ ունիցի ականջս լսելց՝ լուկցէ”:

ԳԱՐ. ԵՆԳԻՐԱՐԵԱՆ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

**Փռ** Կովկասեան փոխարքայի դիւանատանը կազմուած է մի ժամանակաւոր յանձնաժողով, որ պիտի պատրաստէ Ռուսաստա-  
նի բոլոր հայ ուսումնարդանների համար կանոնադրութիւնն ու ծը-  
րագիրը. Փոխարքան առաջարկել է վեհ. Հայրապետին իւր կողմից  
երկու ներկայացուցիչ նշանակել մասնակցելու այդ յանձնաժողո-  
վին. Լսում ենք, որ Վեհափառը մի եպիսկոպոս և երկու աշխար-  
հական է նշանակել՝ միմիայն խորհրդակցական ձայնով:

**Փռ** Վեհ. Հայրապետի կոնդակով ս. Էջմիածնի Հոգևոր ճեմա-  
րանի տեսուչ է նշանակուած յայտնի գրագէտ պ. Մինաս Բերբե-  
րեանը. Արդեօք պիտի յաջողին նորան վերջին տարուայ քարու-  
քանդ ճեմարանը կարդի դնել և ընական շաւդի մէջ դնել մեր  
քարձրագոյն վարժարանի յառաջադիմութիւնը. Հաւատում ենք,  
եթէ միայն...թողին:

**Փռ** Հաագի կոնֆէրէնցիային Վեհ. Հայրապետի կողմից մի ե-  
պիսկոպոսից և երկու աշխարհականներից բաղկացած պատգամա-  
ւորութիւնն է ներկայացել Տաճկահայերի տառապանքները նկա-  
րագրելու և դարձան հայելու, բայց կօնֆէրէնցիան չէ ընդունել  
պատգամաւորութեան խնդիրը.

**Փռ** Բագուի հայոց կուլտուրական միութիւնը առաջիկայ սեպ-  
տեմբերից 42 ծխական դպրոց է քաց անում Ղարաբաղի զիւղե-  
րում:

**Փռ** Յայտնի գրագէտ պ. Նիկողայոս Քարամեանցը պատրաս-  
տում Հայոց պատմութեան մի ընդարձակ դասագիրք:

Փա Հանգ. Զուբալովի կտակի համաձայն քաղաքային վարչութիւնը Թիֆլիսում յատուկ շինութեան մէջ բաց արեց լսարան ժողովրդի կրթութեան համար, ուր այժմ կարդացւում են դասախոսութիւններ ամեն լեզուով:

### ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մի տարուայ ակամայ ընդմիջումից յետոյ «կումանալիսօր վերսկսում է իւր հրատարակութիւնը»:

Ինչու համար է «Հուման» վերսկսուում, կըհարցնէ թերևս պատահական ընթերցողը: Ահա թէ ինչու:

Երբ մի տարի առաջ քաղաքական արհաւիրքների պատճառով մկսեց կաղալ ինչպէս ամբողջ Ռուսիայի, այսպէս նաև հայոց լուրջ մամուլը, մեր թերթը չէր կարող բացառութիւն կազմել, մանաւանդ որ առանց այն էլ արդէն զգալի վնասներ էր կրել մեր խմբագրութիւնը: «Հուման» իւր հրատարակութեան տասնեմէկ տարուայ ընթացքում աւելի քան ութն հազար ուուրբու դէֆիցիտ է ունեցել, որ դամոկլեան սուրի նման կախուած է խմբագրութեանս վերայ:

Այս հանգամանքները ստիպեցին մեզ ժամանակաւորապէս դադարեցնել թերթը և մենք կարծում էինք, որ այլևս «Հուման» ոչ մի հետաքրքրութիւն չի արթնացնում հայ ընթերցող և բանասէր հասարակութեան մէջ: Բայց մեր ենթադրութիւնը սխալ երևցաւ.—խմբագրութիւնս վերջին տարուայ ընթացքում առիթ ունեցաւ համոզուել, որ «Հուման» անհրաժեշտ է հայ հասարակութեան. մեզ համոզեցին այն բազմաթիւ գրաւոր և բերանացի դիմումները, որ անում էին խմբագրութեանս օր առաջ վերսկսելու թերթի հրատարակութիւնը, և մենք այսօր վերստին հրապարակ ենք իջնում, յուսալով, որ թերթի համակրողները, ինչպէս և ընթերցող հայ հասարակութիւնը թէ բաժանորդագրութեամբ և թէ ալ միջոցներով օգնութիւն